ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 19.12.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2019/84

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի

Մասնակցությամբ՝ ՀՀ պաշտպանության նախարարության ներկայացուցիչ՝

Վ. Վահանյանի (լիազորագիր, տրված՝ 13.06.2019թ.)

«Խաչպար» ՍՊԸ-ի տնօրեն՝ Ս. Բալասանյանի (իրավաբանական անձանց պետական միասնական գրանցամատյանից քաղվածք, գրանցման համար՝ 264.110.05665)

քննելով ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար ատամնաբուժական պարագաների և ծախսվող նյութերի ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-9/23» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում «Խաչպար» ՍՊԸ-ի կողմից 12.12.2019թ. ներկայացված (13.12.2019թ. վարույթ ընդունված) բողոքը (հետայսու նաև՝ ԳԲՔԱ-ՆԳ-2019/84 բողոք), պարզեցի հետևյալը.

1. <u>«Խաչպար» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.</u>

«Խաչպար» ՍՊԸ-ն 12.12.2019թ. ներկայացրած բողոքով հայտնել է, որ ՀՀ պաշտպանության նախարարության (հետայսու նաև՝ Պատվիրատու) կողմից

ատամնաբուժական պարագաների և ծախսվող նյութերի ձեռքբերման նպատակով հայտարարություն է հրապարակել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-9/23» ծածկագրով գնանշման հարցման (հետայսու նաև՝ Ընթացակարգ) մասին, որը հաստատվել է գնահատող հանձնաժողովի 2019թ. նոյեմբերի 12-ի թիվ 1.1 որոշմամբ, որի Հրավերի թվով 56 չափաբաժիններով պահանջվում են տարբեր տեսակի ատամնաբուժական պարագաներ և ծախսվող նյութեր:

22.11.2019թ. «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-9/23» ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովի թիվ 4-րդ արձանագրությունով փաստվել է, որ Հրավերին մասնակցելու հայտ են ներկայացրել երկու մասնակիցներ՝ «Էսզեթ Ֆարմա» և «ԴԱՎ ՊՐՈԴՈՒԿՏ» ՍՊԸ-ները, սակայն «ԴԱՎ ՊՐՈԴՈՒԿՏ» ՍՊԸ-ի կողմից www.armeps.am համակարգ բեռնված հայտում բացակայում են էլեկտրոնային փաստաթղթերը՝ այդ թվում նաև գնային առաջարկը, հետևաբար գնահատող հանձնաժողովը հնարավորություն չի ունեցել գնահատել ներկայացված հայտը:

«Էսզեթ Ֆարմա» ՍՊԸ-ի հայտով ներկայացված փաստաթղթերը գնահատվել են հրավերի պայմաններին (պահանջներին) համապատասխանող, իսկ մասնակցի գնային առաջարկի հաշվարկման ճշտությունը, ինչպես նաև հաշվարկման թվաբանական ճշտությունները՝ համապատասխանող:

26.11.2019թ. գնահատող հանձնաժողովը՝ հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 40-րդ կետի, ինչպես նաև Հրավերի 7.6 և 7.7 կետերի պահանջները, ընթացակարգի թիվ 1, 2, 3, 4, 6, 10,11, 13, 14, 16, 17, 18, 19, 20, 21, 24, 25, 27, 28, 29, 30, 32, 34, 35, 36, 37, 38, 39, 40, 41, 48, 49, 50, 51, 52 և 54-րդ չափաբաժինների մասով՝ որպես հայտ ներկայացրած միակ մասնակից, իսկ թիվ 5, 7 և 26-րդ չափաբաժինների մասով՝ որպես որպես նախահաշվային գները գերազանցող գներ առաջարկած, «Էսզեթ Ֆարմա» ՍՊԸ-ին հրավիրել է ներկայացված գների նվազեցման նպատակով կազմակերպվելիք բանակցությունների:

02.12.2019թ. «Էսզեթ Ֆարմա» ՍՊԸ-ն չի ներկայացել գների նվազեցման նպատակով կազմակերպվելիք բանակցություններին, ուստի ներկայացված գները մնացին անփոփոխ:

02.12.2019թ. գնահատող հանձնաժողովը «Էսզեթ Ֆարմա» ՍՊԸ-ին ճանաչել է 1-ին տեղ զբաղեցնող մասնակից Ընթացակարգի թիվ 1, 2, 3, 4, 6, 10,11, 13, 14, 16, 17, 18, 19, 20, 21, 24, 25, 27, 28, 29, 30, 32, 34, 35, 36, 37, 38, 39, 40, 41, 48, 49, 50, 51, 52 և 54-րդ չափաբաժինների մասով և նախատեսել է ընթացակարգի հաջորդ նիստը հրավիրելու օրը:

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-9/23» ծածկագրով գնանշման հարցման հրավերին հայտեր ներկայացրած մասնակիցների հայտերի էլեկտրոնային գնահատման արդյունքում հրավերի պահանջներին համապատասխան գնահատված միայն մեկ հայտը ներկայացրած մասնակցի՝ «Էսզեթ Ֆարմա» ՍՊԸ-ի կողմից, ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշման Կարգի 40-րդ կետի, ինչպես նաև Հրավերի 7.6 և 7.7 կետերի պահանջներով սահմանված գների նվազեցման նպատակով կազմակերպվելիք բանակցություններին չներկայանալը պարտադրել է գնահատող հանձնաժողովին՝ միակ մասնակցին 1-ին տեղ զբաղեցնող մասնակից ճանաչել ընթացակարգի թիվ 1, 2, 3, 4, 6, 10,11, 13, 14, 16, 17, 18, 19, 20, 21, 24, 25, 27, 28, 29, 30, 32, 34, 35, 36, 37, 38, 39, 40, 41, 48, 49, 50, 51, 52 և 54-րդ չափաբաժինների մասով՝ հայտով առաջարկված գներով:

Այս չափաբաժինների մասով 1-ին տեղ զբաղեցնող մասնակից ճանաչված «Էսզեթ Ֆարմա» ՍՊԸ-ի կողմից թվով 36 չափաբաժինների համար առաջարկված գները ամբողջությամբ համընկնում ու համապատասխանում են Պատվիրատուի նախահաշվային գների հետ հրավերի թիվ 2, 4, 11, 13, 14, 16, 17, 18, 19, 20, 21, 24, 25, 27, 28, 29, 30, 34, 35, 36, 37, 38, 39, 40, 41, 48, 49, 50, 51, 52 և 54-րդ չափաբաժինների մասով, իսկ մնացած՝ թիվ 1, 3, 6, 10 և 32-րդ չափաբաժինների մասով, մի փոքր են պակաս Պատվիրատուի նախահաշվային գներից, ինչի արդյունքում Պատվիրատուն այդ թվով 36 չափաբաժինների մասով ապրանքները պետք է ձեռք բերի նախահաշվային ընդհանուր գումարի չափից՝ 35 044 760 (երեսունհինգ միլիոն քառասունչորս հազար յոթ հարյուր վաթսուն) ՀՀ դրամ, շատ աննշան էժան գումարով՝ 34649560 (երեսունչորս միլիոն վեց հարյուր քառասունինը հազար հինգ հարյուր վաթսուն) ՀՀ դրամով, որոնց տարբերությունը կազմում է ընդամենը 395 200 (երեք հարյուր իննսունհինգ հազար երկու հարյուր ՀՀ դրամ:

Վերոգրյալը ցույց է տալիս, որ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-9/23» ծածկագրով գնանշման հարցման Հրավերի ընթացակարգի թիվ 1, 2, 3, 4, 6, 10,11, 13, 14, 16, 17, 18, 19, 20, 21, 24, 25, 27, 28, 29, 30, 32, 34, 35, 36, 37, 38, 39, 40, 41, 48, 49, 50, 51, 52 և 54-րդ չափաբաժինների մասով՝ գնահատող հանձնաժողովի կողմից «Էսզեթ Ֆարմա» ՍՊԸ-ին հաղթող ճանաչելու և նրա հետ ապրանքների մատակարարման պայմանագիր կնքելու պարագայում, Պատվիրատուի կարիքներին համապատասխանող ապրանքների ձեռքբերման գնումների գործընթացը տնտեսող, արդյունավետ և օգտավետ չի իրականացվելու, հակասելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով սահմանված նպատակներին:

«Խաչպար» ՍՊԸ-ն՝ ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի 1-ին մասով և 3-րդ մասի 1-ին կետով, բողոքարկում է Պատվիրատուի՝ ՀՀ ՊՆ-ի «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-9/23» ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովի գործողությունները Հրավերի ընթացակարգի թիվ 1, 2, 3, 4, 6, 10,11, 13, 14, 16, 17, 18, 19, 20, 21, 24, 25, 27, 28, 29, 30, 32, 34, 35, 36, 37, 38, 39, 40, 41, 48, 49, 50, 51, 52 և 54-րդ չափաբաժինների մասով, և դիմելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին, խնդրում է՝ ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ընդունելու որոշում՝ ՀՀ ՊՆ-ի «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-9/23» ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովին արգելելու ընդունել «Էսզեթ Ֆարմա» ՍՊԸ-ին հաղթող ճանաչելու մասին որոշում՝ Ընթացակարգի թիվ 1, 2, 3, 4, 6, 10,11, 13, 14, 16, 17, 18, 19, 20, 21, 24, 25, 27, 28, 29, 30, 32, 34, 35, 36, 37, 38, 39, 40, 41, 48, 49, 50, 51, 52 և 54-րդ չափաբաժինների մասով:

Ընկերությունն ի լրումն բողոքի 19.12.2019թ. ներկայացրել է գրություն, որով հայտնել է հետևյալը.

Պատվիրատուի կողմից Հրավերի «Տեխնիկական բնութագիր - գնման ժամանակացույց»-ի վերջո, բոլոր չափաբաժիններին վերաբերվող պահանջներում առկա՝ «Ապրանքները պետք է ունենան Եվրամիության երկրներից որևէ մեկում և/կամ ԱՄՆ-ում և/ կամ Ճապոնիայում ապրանքների գրանցման հավաստագիր (բացառություն են կազմում ՀՀ-ում արտադրված ապրանքները)»:

Ընկերությունը գտնում է, որ սույն պահանջը չի համապատասխանում «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված պահանջներին և արգելք է հանդիսանում հնարավոր մասնակիցների՝ այդ թվում նաև «Խաչպար» ՍՊԸ-ի համար՝ իրականացնելու «Գնումների մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդված պահանջով սահմանված ցանկացած անձի՝ տվյալ դեպքում՝ «Խաչպար» ՍՊԸ-ի, գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը Հրավերի նշված չափաբաժինների մասերով:

Ընկերությունն ի լրումն բողոքի պահանջի խնդրել է նաև ընդունելու որոշում, որը կպարտավորեցնի՝ ՀՀ ՊՆ-ի «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-9/23» ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովին՝ ընդունելու որոշում՝ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-9/23» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգում փոփոխություն կատարելու համար՝ Հրավերի թիվ 1, 2, 3, 4, 6, 10,11, 13, 14, 16, 17, 18, 19, 20, 21, 24, 25, 27, 28, 29,

30, 32, 34, 35, 36, 37, 38, 39, 40, 41, 48, 49, 50, 51, 52 և 54-րդ չափաբաժինների մասերով:

«Խաչպար» ՍՊԸ-ի տնօրենը, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 19.12.2019թ. ժամը 10:05-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր մասնակցությունը, ով պնդել է բողոքով, ինչպես նաև ի լրումն բողոքի ներկայացված դիրքորոշումը:

2. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը և հիմնավորումները.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 19.12.2019թ. ժամը 10:05-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով առարկել է բողոքի դեմ, հայտնելով, որ այն անհիմն է, քանի որ գնահատող հանձնաժողովն իր բոլոր գործողություններն իրականացրել է գնումների մասին ՀՀ օրենսդրության համապատասխան: Ընդ որում գնման առարկայի նախահաշվահին գները չեն հանդիսանում գաղտնիք, դրանք հրապարակված են սահմանված կարգով:

3. ԳԲՔԱ-ՆԳ-2019/84 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ԳԲՔԱ-ՆԳ-2019/84 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից իր կարիքների համար հայտարարվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-9/23» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 22.11.2019թ. թիվ 4 արձանագրության համաձայն՝ «Էսզեթ Ֆարմա» ՍՊԸ-ն Ընթացակարգի մի շարք չափաբաժինների մասով ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից:

4. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով «Խաչպար» ՍՊԸ-ի կողմից 12.12.2019թ. ներկայացված բողոքը, «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-9/23» ծածկագրով ընթացակարգին վերաբերող փաստաթղթերը, գտնում եմ, որ բողոքն անհիմն է և ենթակա է մերժման հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ սույն օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝

1) պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ.

2) գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

2. Գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

2. Առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը որոշվում է՝

1) բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով, կամ

2) այն մասնակցին ընտրելու մեթոդով, որի առաջարկած գնին և ոչ գնային չափանիշներին տրված գործակիցների հանրագումարը ամենաբարձրն է:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 40-րդ կետի 5-րդ կետի համաձայն՝ հանձնաժողովը հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից որոշում և հայտարարում է առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին: Առաջարկված նվազագույն գների հավասարության դեպքում կամ եթե ոչ գնային պայմանները բավարարող գնահատված հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները գերազանցում են տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների գնման հայտով սահմանված գինը կամ գնումն իրականացվում է օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա՝

ա. առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին որոշելու նպատակով հանձնաժողովի նիստում առաջարկված գների նվազեցման նպատակով ոչ գնային պայմանները բավարարող գնահատված բոլոր մասնակիցների հետ վարվում են միաժամանակյա բանակցություններ, եթե նիստին ներկա են բոլոր մասնակիցները (համապատասխան լիազորություն ունեցող ներկայացուցիչները),

բ. հակառակ դեպքում հանձնաժողովի նիստը կասեցվում է, և մեկ աշխատանքային օրվա ընթացքում գնահատող հանձնաժողովի քարտուղարը բավարար գնահատված բոլոր մասնակիցներին էլեկտրոնային ձևով միաժամանակ ծանուցում է գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների վարման օրվա, ժամի և վայրի մասին,

գ. բանակցությունները վարվում են ոչ շուտ, քան ծանուցումն ուղարկվելու օրվան հաջորդող օրվանից երկրորդ և ոչ ուշ, քան տասներորդ աշխատանքային օրը,

դ. յուրաքանչյուր մասնակցի՝ տվյալ պահին ներկայացրած գնային առաջարկը հրապարակվում է մյուս մասնակիցների համար, և մինչև բանակցությունների համար նախատեսված վերջնաժամկետի ավարտը մասնակիցը կարող է վերանայել իր գնային առաջարկը,

ե. բանակցությունների համար սահմանված վերջնաժամկետը լրանալու պահին, ըստ մասնակիցների ներկայացրած գների, որոնց գինը չի գերազանցում այդ գնումը կատարելու համար հատկացված ֆինանսական միջոցների չափը, որոշվում ու հայտարարվում են առաջին և հաջորդական տեղերն զբաղեցրած մասնակիցները,

զ. բանակցությունների համար սահմանված վերջնաժամկետը լրանալու պահին, եթե մասնակիցների ներկայացրած գները գերազանցում են տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների համար գնման հայտով սահմանված գինը, կամ նվազագույն գները հավասար են, գնման ընթացակարգն օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիման վրա հայտարարվում է չկայացած:

Այսպիսով՝ ՀՀ պաշտպանության նախարարության կողմից իր կարիքների համար հայտարարվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-9/23» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ:

Ընթացակարգի հրավերով հայտերի ներկայացման վերջնաժամկետը սահմանվել է 22.11.2019թ ժամը 11:00-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 22.11.2019թ. թիվ 4 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգին սահմանված ժամկետում էլեկտրոնային հայտ են ներկայացրել «Էսզեթ Ֆարմա» ՍՊԸ-ն և «Դավ Պրոդուկտ» ՍՊԸ-ն:

Արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը հնարավորություն չի ունեցել գնահատել «Դավ Պրոդուկտ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը, քանի www.armeps.am համակարգ բեռնված հայտում ներկայացված բոլոր չափաբաժինների մասով բացակայում են էլեկտրոնային փաստաթղթերը, այդ թվում նաև՝ գնային առաջարկը:

Նույն արձանագրության համաձայն՝ որպես Ընթացակարգի 1-4, 6, 10-11, 13-14, 16-21, 24-25, 27-30, 32, 34-41, 48-52 և 54 չափաբաժինների մասով որպես հայտ ներկայացրած միակ մասնակից, ինչպես նաև հաշվի առնելով այն հանգամանքը, որ 5, 7 և 26-րդ չափաբաժինների մասով «Էսզեթ Ֆարմա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գները գերազանցում են նշված չափաբաժիններով նախատեսված ֆինանսական միջոցները, ուստի հանձնաժողովը համապատասխան օրը հրավիրել է միաժամանակյա բանակցություններ, որոնց «Էսզեթ Ֆարմա» ՍՊԸ-ն չի ներկայացել և գները մնացել են անփոփոխ:

Նույն արձանագրության 4-րդ կետի 4.1. ենթակետի համաձայն՝ «Էսզեթ Ֆարմա» ՍՊԸ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից Ընթացակարգի 1-4, 6, 10,11, 13,14, 16-21, 24,25, 27-30, 32, 34-41, 48-52 և 54 չափաբաժինների մասով:

Այսպիսով՝ ուսումնասիրելով «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-9/23» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի գործողությունները, գտնում եմ, որ դրանք համապատասխանում են գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջներին, ուստի գտնում եմ, որ «Խաչպար» ՍՊԸ-ի բողոքը սույն մասով անհիմն է:

Ինչ վերաբերում է «Խաչպար» ՍՊԸ-ի կողմից բողոքով հրավերի պահանջների վիճարկմանը, ապա բողոքը սույն մասով ևս ենթակա է մերժման, քանի որ Օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ եթե բողոքը ներկայացրած անձը բողոքարկում է գնման առարկայի բնութագրերը, նախաորակավորման հայտարարության կամ հրավերի պահանջները, ապա բողոքը ներկայացվում է մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ գտնում եմ, որ «Խաչպար» ՍՊԸ-ի բողոքն անհիմն է և ենթակա է մերժման

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

«Խաչպար» ՍՊԸ-ի կողմից 12.12.2019թ. ներկայացված բողոքը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**